32. ԻՐԵՔ ԿԼՈՒԽ

Մին քաղաքում ապրում ար մին քյասիր մարթ, մին լոխճին աշկան ընդած, լոխճին քըշտին սըվիրես տրեռած ալլահ եթեր, բեշ բեթեր մարթ։ Էտ քյասիբ մարթը ամման օր բըզարըմը կտավ ար ծախըմ։ Էտ կտավը նա հանըմ ար էտ մրեծ քըղաքին կյըրըզմաններան ըշտեղ ինքը կյըրըզմաննի ար կտրըմ։ Վրեր մրեռալը տանըմ ին թաղըմ, ինքը քըշերը քյընըմ ար կյըրեզմանը քանգըմ, պատանը հանըմ, կյըրեզմանը էլհա վրեղավ անըմ, պատանը յոր օնըմ, կյամ տոն, էքսը տանըմ, բըզարըմը ծախըմ։

Մին դոնըմ էլ մրեռավ էտ քաղաքին մին շատ հարուստի ախճիգյ, ինքն էլ մադար-գյոնդեր, մորը, հորը աշկը յրան, մորը, հորը աշկին լուսը։

Էտ ըխճըկանը հեռը քյինըմ ա էտ պատան հանողին կոշտը, ասըմ. — Օրական քա՞նի մանեթի յրս կըտավ ծախըմ։

Էտ մարթը թա. — Օրական քսան մանեթի։

— Դե վրեր իտի յա, ինք առ էս իրեսուն մանեթը, ամմա, տրես, իմ ըխճըկանըս կյըրեզմանը քանդիս վրե՞չ, կտավը հանելի հետի՞։

Էտ քյասիրն ասըմ ա. — Լավ կինի։

Հիբը ըխճըկանը թաղըմ ըն, պըրծընըմ, էտ կյըրեզմանը քանդող քյասիբ մարթը էլհա քյինըմ ա, քըշերը էտ ըխճըկանը կյըրեզմանը քանդում։

Բըրդան էտ մեյիդը լուզու վա առնըմ, ասըմ. — Ա՛յ մարթ, էտ հինչ աշկըտ ծակ մարթ ըս, էտ խե՞ յրս իմ պատանըս հանըմ,

բա իմ հար քյրեզ իրեսուն մանեթ փողը էլ հո՞ր ա տրվալ... Դե վրեր իտի փուղասեր ըս, իտի աշկտ ծակ ա, թող իմ պատանս յրաս մնա, յրես քյրեզ փողի տրեղ ասիմ, քյինի եր կալ։ Իմ կյրրեզմանաս պատառ դիբի աչ ղոլը, մին տասսը վրեննը տեննը, քյրնա տափը քանդի։ Էնա ընդեղ մարթի իրեք չոր քյաշլա կա, եր կալ, տար բազար, ծախի։ Ընդրանց կյինը միչև քու դյանքիտ վերչը, վրեր օտիս, բոլ ա քյրեզ։

Էտ մարթը էտ ըխճրկանը պատանը էլ հանրմ չի, թազադան ըտրան կյրրեզմանրմրն ա տրնում, թաղրմ... Ընդրանա մին տասսը վրեննատրեղ տափը քանդրմ ա, քանդած տրեղան մարթի իրեք չոր քյաշլա յա տուս կյամ։ Էքսը էտ քյասիբ մարթը յոր ա օնրմ, տանրմ բազար։

Օրը գյրագյի ար, բազարը մարթավ լիգյը։

Հու ճոթ ար ծախրմ, հու խոշկյաբար, հու վրննաման, հու շուրեղան, հու մեյվա, ամմա էտ քյասիբն էլ բազարին մեչին տրեսրտրեն քյինելավ կանչրմ ա։

— Ա՛յ լավ կըլոխ առնող, հու վա օզրմ չոր քյաշլա։

Բրզարին մարթիքը խեթ-խեթ ըտրան ըն եշրմ, ամմա վրեշ մինը մուտանրմ չի։

Ախրը վրերչը մին առրտուրական կյամ ա, ասրմ.— էտ հի՞նչ քյաշլեք ա, վրեր ծախրմ ըս։

— Հեսե ըստի քյաշլեք ա։

Առրտուրականը մին լավ տրնդրղրմ ա, ետավ ասրմ.— էտ իրեք քյաշլեքն էլ մրզանա մին տասը արշին տրեննը տիր, տու վէլ հեռու կաղնի։

Էտ քյասիբ մարթը իտի էլ անրմ ա։

Առրտուրականը թրվանգյը յոր ա օնրմ, փրստոնը մեչին տինրմ, տրրրքցրնրմ։ Առաչին քյաշլին գյուլլան նի չի կյամ, ղրրազավրն ա անց կրենրմ։

Էրկունչի քյաշլան, վրեր թրվանգյը տրրրքցրնրմ ա, ծակվրմ ա, գյուլլան մեչան տուս կյամ։ Իրեքինչի քյաշլին վրեր թվանգյը տրրրքցրնրմ ա, ծակվրմ ա, գյուլլան մրնրմ մեչին, էլ տուս չի կյամ։

Առրտուրականն ասրմ ա.— էտ քյաշլան պրեր, յրես առնիմ։

Էտ քյասիբն ասրմ ա.— Պա հո վրեեե՛, էտ հի՞նչ ալափռանգյի պեներ ըս անը՛մ։

— Պա հինչ ըս գյիդացալ, գյիդացալ ըս, թա չոր քյաշլա առնիլը հալվա յա՛...

Վրերչը էտ քյասիբը իրեքինչի քյաշլան պրերրմ ա, տամ էտ առրտուրականին։ Առրտուրականն ասրմ ա. — Հիշքա՞ն փող տամ։

էտ քյաֆիրն ասում ա.— Դե հինչ կըտաս, կըտաս իլի՞։

— Հինգ հազար մանեթ տա՞մ։

— Հունց թա հինգ հազար մանե՞թ,—արմանքը կալած ասում ա էն քյասիբ մարթը։

— Տասը հազա՞ր տա՞մ.— յրա յա պըերըմ առըտուրականը։

— Վըեեե՞, տասսը հազարըս վըե՞րն ա, ինձանավ մաղաղ ը՞ս անը՞մ,— ափաթը տարած ասում ա էտ քյասիբը, մին զոլան էլ հըվատըմ չի, թա իտի պըեն կինի՞։

Էտ առըտուրականը հանըմ ա տասնըհինգ հազար մանեթը տինըմ էտ քյաֆիբ մարթին ծրեռքին, ասըմ. — Դե լավ, տասնըհինգ հազար տամ։

Ըտրանա ետը էտ առըտուրականը խանչալը հանըմ ա, թըխըմ էտ իրեքինշի քյալլին, վըեր առալ ար, մեչան կըես անըմ։

Էտ քյալլին մեչան եր ա տրեռնում էլ պրոբլյանդնի, էլ թընգյակյին ջավահիր քարեր, էլ զումրուտ քարեր, էլ փուրուզա քարեր, էլ ալմաստ, էլ լալ նան յաղուդ էլ հի՞նչ, հի՞նչ շատ թընգյակյին քարեր պըծրպածին ընելիս, շըփըղշափաղ ընելիս, վըեր մարթի աշկեր շաղվըմ ա եշելիս։

Էտ քյաֆիբ կյրեզմանափորը մընըմ ա քար կըտրած, աշկերը ծիլի-վիլի ընելիս, ամմա դե էլ ըշտրե՞ղ, պըենը-պըենավը անց ա կացալ, ծախալ ա, պըրծալ...

Վըեր առըտուրականը էտ մարթին իտի տրեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛ մարթ, անգուճ տիր ինձ, էս աշխարքըմըս իրեք ջուռա քյալլեք կա։ Քյալլա՞ կա՞, վըեր ինքը հենց ա մին դարանադաղ, էնքան մըեծ ա, ամմա մըեչին պըեն չիկա՞, հինչ էլ ասըմ ըս, կոխկավըն ա անց կըենում, հունցու էն քյալլան, վըեր գյուլլան յրա ըրին, կոխկավը անց կացավ։ Իտի քյալլեքը էս աշխարքըմըս իլած, չիլած մին ա, ըտահանք մին պարի պըեն չըն անըմ, լավ ա իսկի ինին էլ վըեչ։ Էտ առաչի քյալլան։ Երկունչի քյալլան էն ա, վըեր լավ խոսկը լըսիլը լըսըմ ա, ամմա էլհա պըեց ա թողըմ, ըստըղավ տամ ա, էն զոլավը տուս քցում։ Սաղ վախտընին էլ մին լավ պըեն չըն անըմ, ամմա չար պըեն հիշքան ասիս անըմ ըն։ Բազի վախտ էլ մարթ մըտածըմ ա, թա էս օցի ճըտերը յանի մարթի անա յա իլած, թա սրտանի, ըտահանք թարսի ծին եր իլած ըն իլալ էս աշխարքըմըս, ըտրա հետի էլ գյուլլան ծակից, ամմա մեչին չի մնաց, էն զոլավը տուս եկավ։ Իրեքինշի քյալլան էլ էն ա, վըեր հինչ լավ պըեն կա, յոր ա օնըմ, լավ խոսկ կա, կըլխըմը պահըմ ա, խըելունք ա, պարի կործեր ա կըդարըմ, վըեր ուրան անա ետը ասին վըեչ, թա

գյոռիտ իստի-ինդի անին, ուրա̈ն անա ետը ժողովուրթը, քյա̈սիբ-քյըսուբ, իրփիվըերի կնանիք, եթիմ խուխերք, քյինըմ ըն ընդըրա քա-րտն պաչըմ, ղորմի տամ, հումցու վըեր էն Թա̈միրա̈նց Թա̈թա̈վոսին կյըրեզմանը, էն վըեր Շուշի-Ղալըմը մըեծ-պուճուր լոխ ղորմի յին տամ, էն վըեր սաղ քաղաքին հետի էն հեռու, Թըխպըմը կորած սարերան ճուր պըերավ, կողի Ղալան էրված, էլհա ընդըրա ղորմին կա հու կա՞, ընդըրա շինած ախպուրնին մընըմ ա՞, ըտրա մընան մարթին կըլո̈խն էլ իստի Թանդյակյին քարերավ ա լիգյը, ըտրա հետի էլ վըեր գյուլլա̈ն յրա ըրի, մեչին մնաց, էլ տուս չի եկավ, խելումք, շինարար, ծըռքերը վըեսկե, կըլո̈խը իմաստուն մարթի քյա̈լլա̈ յա։ Լա̈վ կիներ, վըեր քու կըլո̈խըտ էլ իտի իներ։

Էտ առըտուրականը էտ լոխ ասըմ ա, պըրծընըմ, էտ Թընգյակին քարերը հըվաքըմ, նի տամ էլհա էն չո̈ր քյա̈լլին մըեչը, յոր օնըմ, քյընըմ ուրա̈նց տուն։

Էտ քյա̈սիբ մարթը մընըմ ա տըեղը կաղնած, արմանքը տարած, մազերան ճըլոլանք իլա̈ծ, վըննըծըեռքը տափան կտրած, էտ առըտուրականին քըմական եչելիս...